3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ- 456 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԵՄԱՏՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 07/80-2/10541-15 և ապրիլի 18-ի N 06/3-3/9709-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 13-ի N 02/14/4297-15, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2015 թվականի ապրիլի 14-ի N 01/07-1/3998-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Հեմատոլոգիա» առարկայի արդիական ուսումնական ծրագրերի ստեղծում»՝ 75,110.15 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ծրագիրը (կցվում է):

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի



ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ Կրթության և գիտության նախարարության
<<Երևանի Պետական Համալսարան>> հիմնադրամի
ռեկտոր Ա. Սիմոնյանի կողմից
........................................
........ 2015թ.

<<Երևանի Պետական Համալսարան>> հիմնադրամի

<<Հեմատոլոգիա>> առարկայի արդիական ուսումնական ծրագրերի ստեղծման

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի շրջանակներում ՀՀ Կրթության և գիտության նախարարության <<Երևանի Պետական Համալսարան>> հիմնադրամի (ԵՊՀ) Կենսաբանության ֆակուլտետի Տիգրան Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնը Անգլիայի, Իտալիայի, Էստոնիայի, Վրաստանի և Ադրբեջանի համալսարանների կենսաբանության ֆակուլտետների իրենց կոլեգաների հետ ստեղծելու են նորացված և Եվրոպական չափանիշներին համապատասխանեցված <<Հեմատոլոգիա>> (Արյունաբանություն) առարկայի ուսումնական ծրագրեր՝ Հարավային Կովկասյան համալսարանների կենսաբանության և բժշկական ֆակուլտետների բակալավրիատում կամ մագիստրատուրայում դասավանդելու համար, կիրառելով էլեկտրոնային ուսուցման մեթոդները, ինչպես նաև ստեղծելու են Կովկասյան տարածաշրջանային հեմատոլոգիական պլատֆորմ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրացրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Կրթության, տեսաձայնային միջոցների և մշակույթի գործադիր գործակալություն (Education, Audiovisual and Culture Executive Agency (EACEA)), դրամաշնորհ՝ <<EACEA-TEMPUS-JPCR-544282>><br>Հասցեն՝ Education Audiovisual & Culture Executive Agency<br>Avenue du Bourget 1, BOUR / BOU2*,1049 Brussels |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության <<Երևանի Պետական Համալսարան>> հիմնադրամ, 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928 |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՀ Կրթության և գիտության նախարարության <<Երևանի Պետական Համալսարան>> հիմնադրամ, Կենսաբանության ֆակուլտետի Տիգրան Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն, բնագավառը կրթություն և գիտություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 75110.15 եվրո (կամ համարժեք դրամ, ըստ ՀՀ ԿԲ-ի տվյալ օրվա եվրո / դրամ փոխարժեքի): Այդ թվում՝<br>2015 թ. – 40872.68 եվրո<br>2016 թ. – 34237,46 եվրո |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 30.03.2015 - 30.11.2016 թթ. (20 ամիս) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015 թ.-ին նախատեսվում է ծախսել 40872.68 եվրո, այդ թվում՝<br><br>- գիտաուսումնական սարքերի և նյութերի ձեռքբերում 18684 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- գիտաուսումնական նյութերի տպագրություն և հրատարակում՝ 2106 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- գործուղման ծախսեր՝ 5149,66 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- ծրագրի ղեկավարման ծախսեր (աշխատավարձ)՝ 10886,4 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- այլ ծախսեր, 1393,2 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- լրացուցիչ ծախսեր, 2653,42 եվրոյին համարժեք դրամի սահմաններում<br><br>2016թ.-ին նախատեսվում է ծախսել 34237,46 եվրո, այդ թվում՝<br>- գիտաուսումնական սարքերի և նյութերի ձեռքբերում 15916 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- գիտաուսումնական նյութերի տպագրություն և հրատարակում՝ 1794 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- գործուղման ծախսեր՝ 4386,74 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- ծրագրի ղեկավարման ծախսեր (աշխատավարձ)՝ 9273,6 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- այլ ծախսեր, 606,8 եվրոյին համարժեք դրամի սահմաններում,<br>- լրացուցիչ ծախսեր, 2260,32 եվրոյին համարժեք դրամի սահմաններում |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 2015 թ.-ին նախատեսվում է՝<br>- 18684 եվրոյին համարժեք դրամի սահմաններում արտերկրներից ներմուծել (կամ գնել ՀՀ ֆիրմաներից) գիտաուսումնական սարքեր և նյութեր (հեմատոլոգիական, իմունոլոգիական և կենսաքիմիական վերլուծիչներ, էլեկտրոնային տեխնիկա, ինչպես նաև լաբորատոր գործիքներ և պարագաներ),<br>- 2106 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, ՀՀ-ում կամ արտասահմանում, տպագրել գիտաուսումնական նյութեր (ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն) և հրատարակել գիտական հոդվածներ (ՀՀ և միջազգային հեղինակավոր ամսագրերում):<br><br>2016թ.-ին նախատեսվում է ՝<br>- 15916 եվրոյին համարժեք դրամի սահմաններում արտերկրներից ներմուծել (կամ գնել ՀՀ ֆիրմաներից) գիտաուսումնական սարքեր և նյութեր (հեմատոլոգիական, իմունոլոգիական և կենսաքիմիական վերլուծիչներ, էլեկտրոնային տեխնիկա, ինչպես նաև լաբորատոր գործիքներ և պարագաներ),<br>- 1794 եվրոյին համարժեք դրամի սահմաններում, ՀՀ-ում կամ արտասահմանում, տպագրել գիտաուսումնական նյութեր (ուսումնական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն) և հրատարակել գիտական հոդվածներ (ՀՀ և միջազգային հեղինակավոր ամսագրերում): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, սարքեր ու նյութեր արտադրող արտասահմանյան ֆիրմաներ, տեղական և արտասահմանյան տպարաններ և հրատարակչություններ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Իրականացվում է ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների դեկանների և գիտական քաղ.-ն, միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր՝ Գ. Գևորգյանի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակը մեկ հաշվետվություն է ներկայացվելու Կրթության, տեսաձայնային միջոցների և մշակույթի գործադիր գործակալությանը և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ - 457 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՔԱՐՎԱՃԱՌ ՔԱՂԱՔԻ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑԻ, ՎԵՐԻՆ ՇԵՆ, ՆՈՐ ԲՐԱՋՈՒՐ, ՆՈՐ ԳԵՏԱՇԵՆ ԵՎ ԵՂԵԳՆՈՒՏ ԳՅՈՒՂԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 07/80-2/11819-15 և մայիսի 7-ի N 06/3-3/11321-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 02/14/5510-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,329,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վիլյամ Սարոյանի անվան դպրոցի, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնուտ գյուղերի դպրոցների կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

անհատ ձեռներեց Վահագն Մելիք-Մարտիրոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2015 թվականի ապրիլի 30-ին կնքված՝ N ԱԿ-05/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 8,329,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«05» մայիսի 2015թ.

**« Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վ.Սարոյանի անվան դպրոցի, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնուտ գյուղերի դպրոցների համակարգչային դասարանների կահավորում»**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վ.Սարոյանի անվան դպրոցի, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնուտ գյուղերի դպրոցների համակարգչային դասարանները անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղ, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 8.329.500,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքի Վ.Սարոյանի անվան դպրոցը, Վերին Շեն, Նոր Բրաջուր, Նոր Գետաշեն և Եղեգնուտ գյուղերի դպրոցները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ ապրիլի 30-ից մինչեւ 2015թ հուլիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ ապրիլի 30-ից մինչեւ 2015թ հուլիսի 30-ը ընկած ժամանակահատվածում վերոնշյալ դպրոցների համակարգչային դասարանների համար սարքավորումների ձեռքբերում՝ 8.329.500,00 դրամ արժեքով |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Անհատ ձեռներեց Վահագ Մելիք-Սարտիրոսյանի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 1 Հավելվածի ցանկի համաձայն՝ գույքի գնում, տեղափոխում եւ անհատույց տեղադրում՝ 8.329.500,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփիչ հաշվետվություններ) |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ - 458 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՍՈՍԵ ԵՎ ԱԼԼԵՍ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ»-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 14-ի N 07/80-2/12005-15 և մայիսի 14-ի N 06/3-3/12007-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 02/14/5502-15 ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի մայիսի 11-ի N02/14/5502-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,163,572 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում գտնվող «Սոսե և Ալլես Ֆաունդեյշն»-ի երիտասարդական կենտրոնի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2015 թվականի մայիսի 7-ին կնքված N ՀՀ-Կ-07/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում նշված կենտրոնում՝ 8,163,572 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«07» ապրիլի 2015 թ.

**« Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում գտնվող «Սոսե և Ալլես Ֆաունդեյշն»-ի երիտասարդական կենտրոնի կահավորում»**

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում գտնվող «Սոսե և Ալլես Ֆաունդեյշն» կազմակերպության երիտասարդական կենտրոնը անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյան գյուղ, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 8.163.572,00 ՀՀ դրամ: |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում գտնվող «Սոսե և Ալլես Ֆաունդեյշն»-ի երիտասարդական կենտրոնի այցելուները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ մայիսի 07-ից մինչև 2015թ. օգոստոսի 07-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ մայիսի 07-ից մինչև 2015թ. օգոստոսի 07-ը Պռոշյան գյուղում գտնվող «Սոսե և Ալլես Ֆաունդեյշն»-ի երիտասարդական կենտրոնի ամբողջական կահավորում՝ 8.163.572,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՏՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի Հավելված թիվ 1-ի ապրանքատեսակների ցանկի /կցվում է/ համաձայն գույքի պատրաստում, գնում, տեղափոխում՝ 8.163.572,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Կոտայքի մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և տարեկան հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝ Արմինե Դարբինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 մայիսի 2015 թվականի N Մ- 459 -Ա

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N Մ-010-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 07/80-2/11716-15 ու մայիսի 12-ի N 06/5-1/11798-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մայիսի 7-ի N ՖԲ/ԱնՄ-4/6880-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (18 տեղ, 3,316 կգ ընդհանուր քաշով, 22,030 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 4,209 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 25-ի N Մ-010-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

Մ. 6/6.11

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ** (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է՝ **FSCU 9838312**: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 22030.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 4209.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 3316 կգ, տեղերի քանակը 18:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | **2078.30** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | **2078.30** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Տավուշի տարածաշրջան) |
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | **2078.30** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 10 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | **1039.15** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | **2078.30** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | **2078.30** | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Մեղրիի և Գորիսի տարածաշրջան) |

02528755 ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ WV ARMENIAN BRANCH

02503251

6/6.11

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | 2078.30 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | 2078.30 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 20 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | 2078.30 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 10 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | 1039.15 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 10 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | 1039.15 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 22 | Տուփ | Օֆիսային կամ դպրոցական պարագաներ | | 2286.15 | Մ-010-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 3316 | 22030.0[illegible] | |

WV ARMENIAN BRANCH

✓

Ի լրումն մեր 2015 թվականի մայիսի 18-ի
N 15/15.1/8368-15 ելիցի

11 հունիսի 2015թ.

No 15/15.1/10032-15

# ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 15-ի N Մ-459-Ա որոշման 1-ին կետում և սույն որոշման կից ցանկում «3,316 կգ ընդհանուր քաշով» բառերի փոխարեն կարդալ «4,120 կգ ընդհանուր քաշով» բառերը:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 460 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 07/80-2/11724-15 և մայիսի 13-ի N 06/5-1/11931-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 7-ի N ԱՄ/22.2/5142-15 ու Հայաստանի Հանրապե-տության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/3993-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (2829 տեղ, 7,592 կգ ընդհանուր քաշով, 96,957.02 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7,500 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-588-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1264-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հան-րապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության [illegible]թյան նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - UA-045G-3142
Բեռնագիր - NAM2106619
1 x 40' կոնտեյներ - BMOU 586450-6
Կապարակնիք - B2001066
Բեռնված 2015 թ. ապրիլի 27-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (թեմի) կողմից
Փ. 18005
ԱՄՆ, Հյուսիսային Կարոլինա, Շարլոտ, 28212

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Միացյալ Հայկական Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Սուիթ 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Վիկտոր Համբարձումյանի 18 փ., բն. 11
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0033,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ 011-37410-22-52-29

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՐԿՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| Անկողնային պարագաներ | 19 | 210.8 | 2,656.50 |
| Հագուստ և աքսեսուարներ | 407 | 3,275.6 | 43,719.80 |
| Նոր կոշիկներ | 6 | 49.3 | 998.40 |
| Երեխաների Ամանորյա տուփեր | 2200 | 2,512.6 | 35,177.80 |
| Խառը սննդամթերք - մսի, ձկան, մրգի և բանջարեղենի պահածոներ | 149 | 857.8 | 2,880.77 |
| Կենցաղային պարագաներ - սեղանի սփռոցներ, սրբիչներ, խոզանակներ, հագուստի կախիչներ | 11 | 110.5 | 1,223.25 |
| Էլեկտրական տաքացուցիչ | 1 | 15.2 | 125.00 |
| Բժշկական պարագաներ - մանրադիտակ, բժշկական արտահագուստ | 3 | 24.6 | 362.00 |
| Շինարարական պարագաներ - դիմակներ, ներկելու սրճիններ | 8 | 189.0 | 6,170.00 |
| Թուղթ, տետր | 4 | 58.4 | 227.20 |
| Կարուձևի պարագաներ - կտորներ, թելեր, ասեղներ | 20 | 285.6 | 3,316.30 |
| Նոր խաղալիքներ | 1 | 2.6 | 100.00 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2829 | 7592 | 96,957.02 |

ԴՐ. 6/6.12

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2015թ. ապրիլի ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

| Վայրը | Ապրանքի անվանումը | Տեղ | Բաշխվող քանակը / կգ | Արժեքը ԱՄՆԴ |
|---|---|---|---|---|
| ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի և գյուղերի՝ «ԱԳԱՊԵ»-ում գրանցված սոցիալապես անապահով մոտ 1000 ընտանիքներ | Անկողնային պարագաներ | 19 | 210.8 | 2,656.50 |
| | Հագուստ և աքսեսուարներ | 407 | 3,275.6 | 43,719.80 |
| | Նոր կոշիկներ | 6 | 49.3 | 998.40 |
| | Երեխաների Ամանորյա տուփեր | 2200 | 2,512.6 | 35,177.80 |
| | Խառը սննդամթերք | 149 | 857.8 | 2,880.77 |
| | Կենցաղային պարագաներ | 11 | 110.5 | 1,223.25 |
| | Էլեկտրական տաքացուցիչ | 1 | 15.2 | 125.00 |
| | Բժշկական պարագաներ | 3 | 24.6 | 362.00 |
| | Շինարարական պարագաներ | 8 | 189.0 | 6,170.00 |
| | Թուղթ, տետր | 4 | 58.4 | 227.20 |
| | Կարուձևի պարագաներ | 20 | 285.6 | 3,316.30 |
| | Նոր խաղալիքներ | 1 | 2.6 | 100.00 |

ԴՐ. 6/6.12

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿՐՈՆԱԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՅՅ մասնաճյուղի հասցեով ուղարկված 2829 տեղով, 7592 կգ համախառն քաշով, 96,957.02 ԱՄՆԴ արժողությամբ և 7500 ԱՄՆԴ ճանապարհածախսով մարդասիրական բեռի կազմում գտնվող 2200 Ամանորյա տուփերի պարունակության մոտավոր ցանկ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|
| Նոր տուփեր | 2200 հատ |
| Մանկական փոքրիկ ծածկոցներ նոր | 328 հատ |
| Փոքր գնդակներ | 438 հատ |
| Ըմպանակներ | 712 հատ |
| Մանկական նկարազարդ գրքեր | 327 հատ |
| Գլխարկներ նոր | 2822 հատ |
| Կոշտ խաղալիքներ նոր | 4133 հատ |
| Խաղալիք ավտոմեքենաներ նոր | 335 հատ |
| Կտորից տակդիրներ | 585 հատ |
| Ներկելու գրքեր | 1016 հատ |
| Սանրեր և մազի խոզանակներ նոր | 2803 հատ |
| Յուղամատիտներ | 1219 տուփ |
| Տիկնիկներ նոր | 219 հատ |
| Ռետիններ | 3862 հատ |
| Մազակալներ նոր | 11135 հատ |
| Փոքր հայելիներ | 488 հատ |
| Ձեռնոցներ նոր | 1254 հատ |
| Բլոկնոտներ/տետրեր | 2365 հատ |
| Մատիտի սրիչներ | 1593 հատ |
| Սև մատիտներ | 11433 հատ |
| Գունավոր մատիտներ | 9033 հատ |
| Նկարի շրջանակներ նոր | 223 հատ |
| Քանոններ | 397 հատ |
| Գուլպաներ նոր | 4635 զույգ |
| Փափուկ խաղալիքներ նոր | 959 հատ |
| Եղունգի հղկիչ | 11 հատ |
| Փոքր անձեռոցիկներ | 50 հատ |
| Տետրեր | 4 տուփ |

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԸ |
|---|---|
| Կպչուն նկարներ/ստիկերներ | 1700 թերթիկ |
| Նորածնի կրծիչներ և ծծակներ | 325 հատ |
| Ատամի խոզանակ | 2404 հատ |
| Նոր վերնաշապիկներ | 411 հատ |
| Մարկերներ | 8008 հատ |
| Նկարելու/ձեռքի աշխ. կոմպլեկտ | 118 հատ |
| Ամրակներ կտորի | 152 հատ |
| Կտորից պայուսակներ և ուսապայուսակներ | 88 հատ |
| Կավիճներ | 20 տուփ |
| Նորածնի նոր շորեր և ներքնազգեստ | 352 հատ |
| Նորածնի զդալ/պատառաքաղ | 95 հատ |
| Սոսինձներ | 215 հատ |
| Հիգիենայի պարագաներ/սրբիչ և օճառ | 1439 հատ |
| Մանկական զարդեր | 670 հատ |
| Մեխանիկական մատիտներ | 145 հատ |
| Գրչատուփ | 95 հատ |
| Գրիչներ | 1120 հատ |
| Պլաստիլին | 136 տուփ |
| Մանկական դրամապանակ | 21 հատ |
| Մկրատներ | 150 հատ |
| Նկարի ալբոմ | 4 հատ |
| Կտորից կարված խաղատիկնիկ | 7 հատ |
| Թղթի կարիչ | 6 հատ |
| Արևային ակնոց մանկական | 26 հատ |
| Ջրի շիշ | 3 հատ |
| Ցատկապարաններ | 5 հատ |
| Սրբիչներ նոր | 20 հատ |
| Շարֆեր նոր | 50 հատ |

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՏՆՕՐԵՆ՝ Ն. ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ- 461 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության 2015 թվականի մայիսի 15-ի N ՇՄ-05-15 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1238-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն)» N Մ-159-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2,720,000 կգ քաշով» բառերը փոխարինել «2,875.000 կգ (2,875 տոննա ) քաշով» բառերով.

2) որոշման 1-ին կետում «NEXOS 230 VL 4WD մակնիշի» բառերը փոխարինել «NEXOS 230 VL 4RM մակնիշի» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 462 -Ա**

**քաղ. Երևան**

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի մարտի 24-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության միջոցներով ձեռք բերված և իր հասցեով ստացված վերականգնողական թերապիայի համար նախատեսված սարքի (111,5 կգ ընդհանուր քաշով, 10,235 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 1,670 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Սարքը անհատույց հանձնվելու է «Խաբբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ-463-Ա**
**քաղ. Երևան**

# «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 5-ի N 07/80-2/11000-15 և ապրիլի 29-ի N 06/3-3/10476-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 5-ի N 02/14/5206-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/3626-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 2,174,088 դրամ ընդհանուր արժեքով «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2015 թվականի փետրվարի 27-ին կնքված՝ N 240215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ գյուղի 4-րդ փողոցի 15 տան տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 2,024,088 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2015 թվականի փետրվարի 27-ին կնքված՝ N 250215 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի Լեփսիուսի փողոցի 11 շենքի 5 բնակարանի մուտքի դռան տեղադրման աշխատանքների իրականացում՝ 150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբազյանի կողմից

«13»-ը ապրիլի 2015թ.

«Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | 1. Արագածոտնի մարզ, գյուղ Շամիրամ, 4-րդ փողոց, տուն 15, բնակելի տան տանիքի վերանորոգում<br>2. ք. Երևան, Կ. Լեփսիուսի փողոց, 11 շենք, բնակարան 5, բնակարանի մուտքի դռան տեղադրման աշխատանքներ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, քաղ. Նունսպեեթ 8071 BN, Սպորլաան 1ա) |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | 1. Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ՝ սոցիալական բնագավառ<br>2. Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան՝ սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1. 2,024,088 դրամ<br>2. 150,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | 1. Սոցիալապես անապահով ընտանիք՝ Ֆերոյան Լալե (անձնագիր՝ AH0587529, տրվ. 27.05.2008թ. 029 կողմից, հեռ. 093.25.84.00)<br>2. Սոցիալապես անապահով ընտանիք՝ Խլոյան Հովիկ (անձնագիր՝ AM0562702, տրվ. 13.12.2011թ. 007 կողմից, հեռ. 093.39.21.80) |

6/9

| | | |
|---|---|---|
| | | |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 1. 2015 թվականի փետրվարի 27-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը<br>2. 2015 թվականի փետրվարի 27-ից մինչև 2015 թվականի մայիսի 1-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. 2015 թվականի փետրվարի 27-ից մինչև 2015թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում բնակելի տան տանիքի վերանորոգում՝ 2,024,088 դրամ ընդհանուր արժողությամբ:<br>2. 2015 թվականի փետրվարի 27-ից մինչև 2015թ. թվականի մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում բնակարանի մուտքի դռան տեղադրման աշխատանքներ՝ 150,000 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան տանիքի կառուցման պայմանագիր, որի արժեքը կազմում է 2,024,088 դրամ:<br>2. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակարանի մուտքի դռան տեղադրման պայմանագիր, որի արժեքը կազմում է 150,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հան[illegible] Արագածոտնի մարզպետարան, Երևանի քաղաքապետարան |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն[illegible] [illegible]անդիայի «Մենսենկինդերեն» միջազգային հիմնադրամին [illegible] կառավարության [illegible]եգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով[illegible] |

Կազմեց ՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

6/9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ-464-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 11-ի N 07/80-2/8732-15 և ապրիլի 28-ի N 06/18-4/10329-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի ապրիլի 10-ի N ԱՄ/22.2/3973-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (2 տեղ, 391.9 կգ ընդհանուր քաշով, 333,295.93 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,299.25 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-465-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 8-ի N 07/80-2/11477-15 և մայիսի 6-ի N 06/5-1/11101-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի մայիսի 4-ի N ԱՄ/22.1/4934-15 միջնորդագիրը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով «Axios» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ օնկոլոգիական հիվանդություններով տառապող հիվանդներին դեղորայքի տրամադրման միջազգային ծրագրի շրջանակներում ստացված 750 տուփ «Գլիվեկ HGC 100 մգ N 120» դեղի (մեկ տեղ (11 արկղ), 93 կգ ընդհանուր քաշով, 2,850,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ-466-Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 07/80-2/10538-15 և ապրիլի 30-ի N 06/5-1/10621-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի ապրիլի 29-ի N 1/06/555-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (2 տեղ, 59 կգ ընդհանուր քաշով, 7,447 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-467-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 07/80-2/10537-15 և ապրիլի 29-ի N 06/5-1/10527-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի ապրիլի 29-ի N 1/06/554-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (մեկ տեղ, 13.4 կգ ընդհանուր քաշով, 3,411.47 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-468-Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՌՄ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 07/80-2/10651-15 և մայիսի 4-ի N 06/5-1/10897-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N ԱՄ/22.2/4897-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ամերիկահայ բարերար Ստիվն Քաշյանի կողմից որպես օժանդակություն «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով, կազմակերպության բարեգործական դեղատան համար ուղարկված դեղորայքի (ինսուլին՝ մեկ տեղ, 9.5 կգ ընդհանուր քաշով, 4,360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «ԱՌՄ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-469-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 21-ի N 07/80-2/10000-15 և ապրիլի 18-ի N 06/5-1/9704-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդափոխության համակարգի սարքավորումները (13 տեղ, 5,532 կգ ընդհանուր քաշով, 116,480 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-470-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 29-ի N 07/80-2/10512-15 և մայիսի 4-ի N 06/18-4/10694-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բնական քարերից երեսապատման սալիկները (19 տեղ, 8,720 կգ ընդհանուր քաշով, 59,125 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,023,000 դրամ, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-471-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 29-ի N 07/80-2/10511-15 և ապրիլի 30-ի N 06/5-1/10632-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բնական քարից պատրաստված շինարարական մանրամասները (18 տեղ, 10,800 կգ ընդհանուր քաշով, 105,256.64 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,636,000 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-472-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 07/80-2/11486-15 և մայիսի 11-ի N 06/5-1/11550-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռը (17 տեղ, 5,260 կգ ընդհանուր քաշով, 57,995 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,648.39 ԱՄՆ-ի դոլար, ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ֆյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա և 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՂԵԿԱՎԱՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀՀ ԿԲԾՀ Մ- 203- Ա առ 13.03.2015թ որոշման (Մ-648 –Ա առ19.07.2013թ. որոշման փոփոխություն)շրջանակներում ստացված TCLU 5005359 բեռնարկղի բեռի ցանկ**

Տեղերի քանակը՝17, ընդհանուր քաշը՝5260 կգ, բեռի արժեքը կազմում է 57995 ԱՄՆ - ի դոլար, տրանսպորտային ծախսերը 6648.39 ԱՄՆ - ի դոլար

| Ապրանքների անվանումը | Քանակը ըստ չափման միավորի | Բրուտտո քաշը /կգ/ | Նետտո քաշը /կգ/ | Արժեքը $ | Տեղերի քանակ |
|---|---|---|---|---|---|
| Ներկարարի խոզանակ | 1հատ | 0.13 | 0.1 | 8.88 | 1 |
| Քանոն մետաղյա | 3 հատ | 0.95 | 0.75 | 44.07 | |
| Քանոն պլաստմասե | 1 հատ | 0.12 | 0.1 | 9.49 | |
| Բեռի ամրակայ ռետինե | 4հատ | 0.7 | 0.6 | 9.8 | |
| Գործիքների տուփ | 1հատ | 0.3 | 0.2 | 28.6 | |
| Դանակ | 4հատ | 0.8 | 0.7 | 7.23 | |
| Սրաքարը հղկող ձեռքի գործիք | 1հատ | 0.15 | 0.1 | 15.94 | |
| Կավճի գծանշման գործիք | 1հատ | 0.35 | 0.3 | 7.5 | |
| Սղոցի շղթայի ձեռքի սրող գործիք | 2հատ | 0.6 | 0.5 | 69.89 | |
| Շոշաթուղթ գլանակ | 24 հատ | 0.6 | 0.5 | 47 | |
| Աշխատանքային ձեռնոց | 38զույգ | 7.5 | 7 | 119.74 | |
| Փայտի մետաղյա պտուտակ | 2տուփ | 2.5 | 2.4 | 39.18 | |
| Փայտի մետաղյա պտուտակ | 8տուփ | 12.5 | 11.3 | 245.4 | |
| Էլ.սղոցի մետաղ կտրող սկավառակ | 10հատ | 1.9 | 1.8 | 29.44 | |
| Ներկարարական վրձին | 3 հատ | 0.6 | 0.5 | 40.56 | |
| Սղոց ձեռքի | 1հատ | 0.25 | 0.2 | 7.22 | 1 |
| Սոսինձ փայտի | 1հատ | 0.3 | 0.25 | 10.95 | |
| Գոտի գործիքների | 1 հատ | 0.5 | 0.4 | 23.08 | |
| Շուշաթուղթ երիզ | 15 հատ | 1.2 | 1 | 79.79 | |
| Փայտամշակման գործիքների հավաքածու ձեռքի | 3 հատ | 0.75 | 0.7 | 27.41 | |
| Փայտամշակման գործիքների հավաքածու ձեռքի | 6 հատ | 1.2 | 1 | 21.21 | |
| Բարձրախոս | 2 հատ | 1.7 | 1.4 | 59.98 | 1 |
| Փայտե ստենդ գործիքների համար | 1հատ | 0.7 | 0.6 | 31.5 | |
| Սրաքար սկավառակ | 1հատ | 1.8 | 1.6 | 33.17 | |
| Սամլիշի շուրթեր | 2հատ | 0.2 | 0.15 | 12.95 | |
| Սվերլո | 12հատ | 0.3 | 0.25 | 37.94 | |
| Պլաստմասայի պաշտպանիչ ցող | 3 հատ | 3.0 | 2.5 | 25.47 | |
| Առաջին օգնության տուփ | 1տուփ | 0.6 | 0.5 | 44.94 | |
| Պտուտակահանի գլխիկների հավաքածու | 1տուփ | 0.6 | 0.5 | 16.22 | |
| Դանակի կտրող լեզվակներ | 1տուփ | 0.3 | 0.25 | 14.36 | 1 |
| Մատիտներ գծանշման | 3տուփ | 0.5 | 0.4 | 21.81 | |
| Փայտը հղկող գործիքի երիզ | 1հատ | 0.1 | 0.1 | 2.39 | |
| Սվերլո փայտամշակման | 23 հատ | 3 | 2.5 | 168.17 | |
| [illegible]ատե սայրով կտրող սկավառակ | 3հատ | 1.2 | 1.0 | 41.01 | |
| [illegible]մակերեսը հղկող ձեռքի [illegible] | 1հատ | 0.4 | 0.35 | 7.45 | |
| Էլ.[illegible]կահանի մարտկոցի լիցքա[illegible] | 1հատ | 0.8 | 0.7 | 59.97 | |
| Երկ[illegible]ման էլ. լար | 1հատ | 0.4 | 0.3 | 13.97 | |
| [illegible]տրանսֆորմատ | 1 հատ | 12.5 | 12 | 73.1 | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ցուղի զտիչ ավտոմեքենայի | 2հատ | 0.5 | 0.45 | 11.28 | |
| Գործիքների զոգնոց | 1հատ | 1.4 | 1.3 | 55.07 | |
| Անձեռոցիկ- սրբիչ թղթյա | 24 փաթեթ | 10.3 | 9.2 | 92.32 | 1 |
| Մամլիչ սեղանի | 1հատ | 19.6 | 17.5 | 107.61 | 1 |
| Փայտը հղկող էլ. գործիք | 1հատ | 19.7 | 17.0 | 337.01 | 1 |
| Խոզանակ սկավառակ | 1հատ | 1.2 | 1.1 | 22.72 | |
| Օդազտիչ ավտոմեքենայի | 1հատ | 0.6 | 0.5 | 16.89 | |
| Սեղանի էլ.տաշող գործիք | 1հատ | 17 | 16 | 199.99 | 1 |
| Ավտոմեքենայի հատակի ռետինե գորգիկներ | 4 հատ | 7.7 | 5.1 | 262.33 | 2 |
| Ճակատային միաշերտ բեռնիչ օգտ. | 1հատ | 2640 | 2640 | 26480 | 1 |
| Ճակատային միաշերտ բեռնիչի մասեր, այդ թվում՝ քանդող շերեփ | 1հատ | 886 | 886 | 13920 | |
| Բարձող շերեփ | 1հատ | 255 | 243 | 2763 | 1 |
| Հորատիչ սարք | 1 հատ | 188 | 173 | 2435 | 1 |
| Հարթաշերեփ | 1 հատ | 352 | 337 | 2316 | 1 |
| Հորատիչ զսպանակ | 1հատ | 38 | 35 | 554 | |
| Գետնափոր | 1հատ | 527 | 507 | 5352 | 1 |
| Բեռնիչներ | 1հատ | 202 | 187 | 1079 | 1 |
| Անիվների շղթաներ | 4հատ | 32 | 30.8 | 434 | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 5260 | 5162.45 | 57995 | 17 |

Տրանսպորտային ծախսեր 6648.39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-473-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 07/80-2/11493-15 և մայիսի 11-ի N 06/5-1/11680-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված համակարգչային սարքավորումները և մալուխները (մեկ տեղ, 46 կգ ընդհանուր քաշով, 3,214.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 321 ԱՄՆ-ի դոլար փոխադրման և այլ ծախսերը, «Զվարթնոց» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-474-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 07/80-2/11535-15 և մայիսի 6-ի N 06/3-3/11052-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա և փետրվարի 25-ի N Մ-153-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2015 թվականի ապրիլի 22-ին կնքված՝ N SI 2015-04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների և կահույքի պատրաստման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 4,660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2015 թվականի ապրիլի 22-ին կնքված՝ N MI/220415 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 14,552,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-475-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 18-ի N 07/80-2/9705-15 և ապրիլի 16-ի N 06/3-3/9364-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տեխնովելդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00881087) 2015 թվականի ապրիլի 6-ին կնքված՝ N 03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կոյուղագծերի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 1,961,343 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-476-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 22-ի N 07/80-2/10112-15 և ապրիլի 21-ի N 06/3-3/9997-15 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էկոմիքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01255701) 2015 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 5,577,075 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-477-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 21-ի N 07/80-2/10002-15 և ապրիլի 18-ի N 06/3-3/9696-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-846-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մարմարի աշխարհ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00808678) 2015 թվականի մարտի 16-ին կնքված՝ N 03/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 20 քառ. մետր մարմարե սալիկների մատակարարում՝ 1,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-478-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 6-ի N 07/80-2/11039-15 և ապրիլի 29-ի N 06/3-3/10485-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դաշինք» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01519996) 2015 թվականի ապրիլի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական գործիքների և նյութերի ձեռքբերում՝ 4,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ-479-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N 07/80-2/10708-15 և մայիսի 4-ի N 06/3-3/10706-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինֆորմատիկ սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2015 թվականի մարտի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տպիչի ժապավենների ձեռքբերում՝ 840,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ		Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-480-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N 07/80-2/10701-15 և մայիսի 4-ի N 06/3-3/10846-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) ԱՄՆ-ի քաղաքացի Բիայնա Բոգոսյանի հետ (անձնագիր՝ 429738207) 2014 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված՝ N 01-24.12.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հաշվողական դիզայնի դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 850,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ԱՄՆ-ի քաղաքացի Արա Շիրինյանի հետ (անձնագիր՝ 432692989) 2015 թվականի հունվարի 23-ին կնքված՝ N 01-23.01.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղերի դիզայնի դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) Կանադայի քաղաքացի Հայգ Արմենի հետ (անձնագիր՝ QA887681) 2015 թվականի մարտի 10-ին կնքված՝ N 01-10.03.15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտադրողական արվեստի դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 1,200,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-481-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N 07/80-2/10836-15 և մայիսի 4-ի N 06/3-3/10689-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սոֆթ թայմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02608299) 2015 թվականի մարտի 24-ին կնքված՝ N 240315 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրերի արտոնագրերի ձեռքբերում՝ 340,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ինֆորմատիկ սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2015 թվականի մարտի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տպիչի ժապավենների ձեռքբերում՝ 420,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սոլիդ մակերես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00865263) 2015 թվականի ապրիլի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վեց հատ արհեստական քարից պատրաստված համակարգչային սեղանի ձեռքբերում՝ 3,992,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-482-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի N Մ-673-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 21-ի N 07/80-2/10001-15 և ապրիլի 18-ի N 06/3-3/9698-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2015 թվականի ապրիլի 15-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-673-Ա որոշման (2014 թվականի նոյեմբերի 14-ի N Մ-1139-Ա որոշման խմբագրությամբ) 1-ին կետի երկրորդ պարբերությունում «3,600,000 դրամի չափով» բառերը փոխարինել «3,960,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-483-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-631-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 07/80-2/11494-15 և մայիսի 6-ի N 06/3-3/11110-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի ապրիլի 30-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-631-Ա որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում (2015 թվականի հունվարի 30-ի N Մ-044-Ա որոշման խմբագրությամբ) «24,490,152 դրամի չափով» բառերը փոխարինել «22,303,040 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ-484-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N Մ-204-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 21-ի N 07/80-2/10034-15 և ապրիլի 18-ի N 06/3-3/9713-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության 2015 թվականի ապրիլի 15-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1» N Մ-204-Ա որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում «5,587,750 դրամի չափով» բառերը փոխարինել «6,303,635 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-485-Ա**
**քաղ. Երևան**

## «ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ - ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12221-15 և մայիսի 15-ի N 06/3-3/122240-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 02/14/5554-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) իրականացվող՝ 25,945,200 դրամ ընդհանուր արժողությամբ «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վուդկրաֆտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00440713) 2015 թվականի մարտի 2-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռնակների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 325,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սիէսէլ պրոջեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02622015) 2015 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ակտիվ ձայնային համակարգի սարքավորումների ձեռքբերում՝ 2,475,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Սֆերա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533318) 2015 թվականի մարտի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 23,145,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի
նախագահ Լ. Մարգսյանի կողմից

«05» մայիսի 2015թ.

**«Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի մասնակի կահավորում» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի միջոցներով կառուցված «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի մասնակի կահավորում և սարքավորումներով հագեցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Սիրիահայ բարերար Կաբրիել Ռհիաննեսի Ղեներջի (Սիրիայի Հանրապետություն, քաղ. Հալեպ, անձնագիր՝ N003005753 տրված 16/08/07թ) և այլ անհատներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Փյունիկ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Երվանդ Քոչարի փողոց, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, քաղ. Երևան, Արշակունյաց պողոտա 28, մշակույթի բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 25,945,200 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոն (քաղ. Երևան, Արշակունյաց պողոտա 28): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվական մարտի 1-ից մինչև 2015 թվականի հուլիսի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Մշակութային կենտրոնի մասնակի կահավորում՝<br>- հանդերձարանների, կոֆերենս սրահի և աուդիտորիաների կահավորում՝ 23,145,000 դրամ,<br>- հակահրդեհային և էլեկտրասնուցման համակարգի սարքավորումների համար տուփերի պատրաստում և տեղադրում՝ 325,200 դրամ,<br>- ակտիվ ձայնային համակարգի տեղադրում՝ 2,475,000 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և | - հանդերձարանների, կոֆերենս սրահի և աուդիտորիաների կահույքի պատվիրում և տեղադրում՝ 23,145,000 դրամ, |



| | | |
|---|---|---|
| | նախատեսվող գինը | - հակահրդեհային և էլեկտրասնուցման համակարգի սարքավորումների համար տուփերի պատրաստում և տեղադրում՝ 325,200 դրամ,<br>- ակտիվ ձայնային համակարգի սարքավորումների ձեռքբերում և տեղադրում՝ 2,475,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ մշակույթի նախարարություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համաձայնությամբ և բարերարներին կներկայացվեն հաշվետվություններ՝ ծրագրի իրականացման ընթացքի ու ավարտի վերաբերյալ: |

Կազմեց Ս.Նալչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-486-Ա**
**քաղ. Երևան**

## «ՓՅՈՒՆԻԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 14-ի N 07/80-2/12001-15 և մայիսի 13-ի N 06/3-3/11968-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N02/14/5699 -15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) իրականացվող՝ 200,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հրատարակչական աջակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2015 թվականի մարտի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների մատուցում՝ 16,556,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էդիթ պրինտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009253) 2015 թվականի ապրիլի 1-ին կնքված՝ N 03/015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական ծառայությունների մատուցում՝ 10,270,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Փյունիկ» բարեգործական հիմնադրամին՝



1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Փյունիկ» բարեգործական հիմնադրամի
նախագահ [illegible]րգսյանի կողմից

«11» մայիսի 2015թ.

**«Հրատարակչական աջակցություն» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկներին, ոչ առևտրային կազմակերպություններին և անհատներին պետական ու համազգային նշանակության հրակարակչական նյութերի տպագրության գործում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Միրիահայ բարերար Կաբրիել ՈՒհաննեսի Ղենբերջի (Սիրիայի Հանրապետություն, քաղ. Հալեպ, անձնագիր՝ N003005753 տրված 16.08.2007թ.) և այլ անհատներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Փյունիկ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Երվանդ Քոչարի փողոց, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի, ՀՎՀՀ՝ 01565354) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 200,000,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հանյաստանի Հանրապետության պետական հիմնարկներ, ոչ առևտրային կազմակերպություններ և անհատներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվական ապրիլի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է պետական ու համազգային նշանակության հրակարակչական նյութերի տպագրություն՝ շուրջ 200,000,000 դրամի չափով, առանձին միջոցառումներ չեն նախատեսվում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Տարբեր հրատարակչություններից նյութերի տպագրման ծառայությունների ձեռքբերում՝ շուրջ 200,000,000 դրամի չափով: |

2

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկներ, ոչ առևտրային կազմակերպություններ և անհատներ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով [illegible] Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և բարերարներին կներկայացվեն հաշվետվություններ՝ ծրագրի իրականացման ընթացքի ու [illegible] վերաբերյալ: |

Կազմեց

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-487-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 07/80-2/11817-15 և մայիսի 13-ի N 06/5-1/11888-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 1/06/595-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով կանանց ազգային հավաքականի համար ուղարկված մարզահագուստի (23 տեղ, 184.5 կգ ընդհանուր քաշով, 9,505.50 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-488-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11909-15 և մայիսի 14-ի N 06/5-1/12094-15 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 1/06/605-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով կանանց ազգային հավաքականի համար ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (26 տեղ, 231 կգ ընդհանուր քաշով, 3.581.30 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-489-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-133-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 07/80-2/11715-15 և մայիսի 13-ի N 06/5-1/1185-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված էլեկտրոնային լուսատախտակի պահեստամասերը (մեկ տեղ, 11 կգ ընդհանուր քաշով, 4,775 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 275 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-133-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-490-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12222-15 և մայիսի 12-ի N 06/3-3/11759-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա, 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա և 2015 թվականի հունվարի 26-ի N Մ-006-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Աուդիտ սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00419022) 2015 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N ԱԾ-11/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2014 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության աշխատանքների իրականացում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-491-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11976-15 և մայիսի 13-ի N 06/3-3/11865-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա և 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2015 թվականի մայիսի 5-ին կնքված՝ N 47-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 150 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 6,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-492-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11975-15 և մայիսի 11-ի N 06/3-3/11549-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2015 թվականի մայիսի 5-ին կնքված՝ N ՎՏՀ/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 800 քառ. մետր տրավերտինե սալիկների մատակարարում՝ 9,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ-493-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 07/80-2/15130-15 և մայիսի 7-ի N 06/3-3/11328-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոֆթ թայմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02608299) 2015 թվականի ապրիլի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինը հատ անխափան սնուցման սարքի ձեռքբերում՝ 2,088,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 մայիսի 2015 թվականի N Մ-494-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 15-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N Մ-421-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի մայիսի 12-ի N Կ-12/05 և մայիսի 29-ի N Կ-29/05 գրությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-182-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 29-ի N Մ-1356-Ա որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին» N Մ-421-Ա որոշման 1-ին կետում «2,650 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «2,960 կգ ընդհանուր քաշով» բառերով և որոշմանը կից ցանկը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**TCLU 500535-9 բեռնարկղի բեռի և բաշխման ցանկ**

Տեղերի քանակը՝368, ընդհանուր քաշը՝2960 կգ, բեռի արժեքը կազմում է 21060 ԱՄՆ - ի դոլար, տրանսպորտային ծախսերը 1747.5 ԱՄՆ - ի դոլար

| Ապրանքի անվանումը | Քանակը ըստ չափման միավորի | Բրուտտո քաշը /կգ/ | Արժեքը $ | ՀՀ ԿԲԾՀՀ որոշումները և շահառուները |
|---|---|---|---|---|
| Ծալվող քայլակ օգտագործված | 1 հատ | 3.2 | 25 | Կարիքավոր քաղաքացիներ «Բարեկեցիկ մանկություն և ծերություն 4» առ Մ – 1356-Ա առ 29.12.2014թ. |
| Ծածկոց օգտագործված | 1 հատ | 3.1 | 20 | |
| Բազմոց օգտագործված | 1 հատ | 52 | 150 | |
| Սայլակ հաշմանդամի օգտագործված | 1 հատ | 19 | 40 | |
| Տակաշոր | 13 արկղ | 136.7 | 520 | |
| Հիգիենիկ տակդիր | 33 արկղ | 139.5 | 1600 | |
| Հենակ օգտագործված | 2 զույգ | 3.6 | 30 | |
| Զուգարանի նստատեղ օգտագործված | 1 հատ | 1.8 | 40 | |
| Կոշիկ | 115զույգ | 46.7 | 1938 | |
| Կանացի հողաթափ | 26 զույգ | 9.3 | 285 | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրն ունի հետևյալ ակնկալվող արդյունքները՝<br><br>1. ՄԻԱՎ/ՁԻԱՀ վերաբերյալ տեղեկատվության տարածում և 15-23 տարեկան երիտասարդների և երիտասարդ զույգերի շրջանում իրազեկվածության բարձրացում<br>2. ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում ՀԿԽԸ կարողությունների ամրապնդում<br>Ծրագրի շրջանակներում ակնկալվող արդյունքներին հասնելու համար նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br><br><u>Ակնկալվող արդյունք 1</u><br><br>1.1 Կրթական դասընթացների իրականացում 15-23 տարիքային խմբի թվով 200 կամավորների համար, որոնք հավասարը հավասարին սկզբունքով կրթական հանդիպումներ են կազմակերպելու իրենց հասակակիցների շրջանում, ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբերի 1-ից – 2014թ. նոյեմբերի 30-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 8200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br><br>1.2 Հավասարը հավասարին սկզբունքով կրթական հանդիպումների |



| | | |
|---|---|---|
| | | իրականացում 15-23 տարիքային խմբի բնակչության խմբերի շրջանում, ժամանակահատվածը՝ 2014թ. դեկտեմբերի 1-ից 2015 թ. մայիսի 31-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 4200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br>1.3 Կրթական դասընթացների իրականացում երիտասարդ ընտանիքների շրջանում՝ մինչև 140 հոգի, ժամանակահատվածը՝ 2014թ. նոյեմբերի 1-ից 2014թ. նոյեմբերի 30-ը, 2015թ. ապրիլ 1-ից 2015թ. ապրիլի 30-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 3400 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>1.4 Կրթական դասընթացների իրականացում դասախոսների շրջանում՝ մինչև 40 հոգի, ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբերի 1-ից 2014թ. հոկտեմբերի 31-ը, 2015թ. մարտ 1-ից 2015թ. մարտի 31-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 2280 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>1.5 Խորհրդատվությունների իրականացում Երևանի, Գյումրու և Վանաձորի խորհրդատվական կենտրոններում, ժամանակահատվածը՝ 2014թ. հուլիս 1-ից - 2015թ. հունիսի 30-ը :<br>Ընդհանուր արժողությունը՝ 1200 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>1.6 Հանրային միջոցառումների կազմակերպում, թվով երկու, նվիրված ՁԻԱՀ-ի համաշխարհային և ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակի օրերին, համապատասխանաբար՝ 2014թ. դեկտեմբերի 1-ը, և 2015թ. մայիսի 3-րդ կիրակին:<br>Ընդհանուր արժողությունը՝ 2500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ :<br>1.7 Տեղեկատվական բուկլետների տպագրություն ՄԻԱՎ/ՁԻԱՀ վերաբերյալ |

| | | |
|---|---|---|
| | | ծրագրի շահառուների համար:<br>Ընդհանուր արժողությունը՝ 820 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ<br>1.8 Գրասենյակային, համակարգչային տեխնիկայի գնում ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների իրականացման համար:<br>Ընդհանուր արժողությունը՝ 2000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>Ակնկալվող արդյունք 2<br>2.1 Դասընթացների կազմակերպում և իրականացում ՀԿԽԸ աշխատակիցների և կամավորների համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում, ժամանակահատվածը՝ 2014թ. հոկտեմբեր 1-ից 2015թ. ապրիլի 30-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 6000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>2.2 Ծրագրի շրջանակներում մշակված նյութերի և ձեռք բերված փորձի տարածում գործընկերների շրջանում, ծրագրի ընթացքում ակտիվ կամավորների հետ հանդիպումների, ծրագրի վերաբերյալ ընթացիկ քննարկումների կազմակերպում, կամավորների խրախուսում, ժամանակահատվածը՝ 2014թ. սեպտեմբերի 1-ից 2015թ. մայիսի 31-ը:<br>Ընդհանուր արժողությունը՝ 9100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>3.1 Կազմակերպչական և պահպանման ծախսերը՝ 5300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները հիմնականում կրթական, իրազեկման և խորհրդատվական են, ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել և պատրաստել կրթական և իրազեկման նյութ՝ 1720 ԱՄՆ |



| | | |
|---|---|---|
| | | դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, հանդիպումների և դրական միջոցառումների ընթացքում մասնակիցների սննդի ապահովումը և գրենական պիտույքների ընդհանուր արժողությունը 19900 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, ծրագրի կառավարման և իրականացման վերաբերյալ ակտիվ կամավորների և աշխատակազմի համար ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում ուսուցողական դասընթացների համար նախատեսված գործուղման ծախսերի ընդհանուր արժողությունը 15100 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, նախատեսվում է նաև ակտիվ կամավորների համար խրախուսական նվերների ձեռք բերում՝ 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ արժեքով և պահպանակների ձեռք բերում՝ թվով12000 հատ, 480 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով: Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների իրականացման համար նախատեսվում է նաև գրասենյակային, համակարգչային տեխնիկայի գնում՝ 2000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Կազմակերպչական և պահպանման ծախսերը՝ 5300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսերը, նախատեսված 2014թ. հուլիսի 1-ից 2015թ. հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար, կազմում են 5300 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Դրանք ներառում են ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, գործունեության համար անհրաժեշտ ծախսերը, կապի և կոմունալ ծախսերը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվում է կրթական հաստատությունների հետ անմիջական համագործակցությամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմները | Նախատեսվում է տրամադրել ամսական, եռամսյակային և ավարտական |

| | | |
|---|---|---|
| | նկարագրությունը | հաշվետվություններ Ամերիկյան Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Ներկայացվելու են հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին` ըստ սահմանված կարգի: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ - 511 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՕՅՈՒՆՋՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՅՈՒՄՐԻԻ «ՎԱՐԴՈՒՀԻ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11847-15 և մայիսի 7-ի N 06/3-3/11320-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 02/14/5507-15 և Շիրակի մարզպետարանի 2015 թվականի մայիսի 7-ի N 01/2243-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ Շիրակի մարզ, քաղ.Գյումրի, Միեր Մկրտչյան 47, ՀՎՀՀ 05538995) իրականացվող՝ 172,228,150 դրամ արժողությամբ «Գյումրիի «Վարդուհի» արվեստի դպրոցի երեխաների համար կրթամշակութային դաստիարակության կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված TOYOTA RAV4 մակնիշի ավտոմեքենան (2015 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ 2T3BFREV5FW289557, 25,848 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի օգոստոսի 12-ին կնքված՝ N 120682 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի ապրիլի 20-ից մինչև 2018 թվականի



մայիսի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 3,330,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2014 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի ապրիլի 20-ից մինչև 2018 թվականի մայիսի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 511,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. «Օյունջյան» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում. նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Գյումրիի քաղաքապետարան և Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Օյունջյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն............................ Գ. Լանիկյան

13. 05. 2015թ.

**«Օյունջյան» բարեգործական հիմնադրամի կողմից «Գյումրիի «Վարդուհի» արվեստի դպրոցի երեխաների համար կրթամշակութային դաստիարակության կազմակերպում»**

**Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի անմիջական նպատակը | Գյումրիում տեղակայված «Վարդուհի» արվեստի դպրոցի աշակերտների կրթամշակութային և գեղագիտական ծառայությունների մատուցում: Վերջինս իրականացվում է նրանց մասնագիտական գիտելիքներ և գեղարվեստական հմտություններ ուսուցանելու միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | «Օյունջյան» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող մասնագիտական ծառայությունների մատուցման, դպրոցին անհրաժեշտ կահույքի և տրանսպորտային միջոցի ձեռքբերման, գրենական-գեղարվեստական պիտույքների, սանիտարահիգիենիկ պարագաների գնման, ընթացիկ վերանորոգման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում և տրանսպորտային միջոցի մաքսազերծման վճարի (ներմուծման պահին գանձվող ԱԱՀ, մաքսատուրք) ազատում: |
| 3 | Բարեգործը | Ամերիկահայ բարերար Ջոն Օհաննես Օյունջյան: |
| 4 | Ծրագրի կատարողը | «Օյունջյան» բարեգործական հիմնադրամ,<br>հասցեն՝ ՀՀ, ք. Գյումրի, Մհեր Մկրտչյան 47, ՀՎՀՀ 05538995: |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մհեր Մկրտչյան 47:<br>Բնագավառը՝ ուսումնակրթական, մշակութային և գեղարվեստական: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 172 228 150 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Միջոցները ստացվելու են ամերիկահայ բարերար Ջոն Օհաննես Օյունջյանից: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Գեղարվեստական ունակություն և գեղագիտական դաստիարակություն /երաժշտություն, երգ, պար, ասմունք, նկարչություն, քանդակ, դեկորատիվ-կիրառական արվեստ և այլն/ ստանալու ցանկություն ունեցող երեխաները, որոնք կընդգրկվեն դպրոցական ծրագրում:<br>Շահառուների թիվը՝ մինչև 250 երեխա:<br>Դպրոցի ուսումնական ծրագրերում ընդգրկված երեխաները կստանան գեղագիտական համակողմանի կրթություն՝ գործող ուսումնական ծրագրերին և նաև պետական չափորոշիչների համաձայն: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը և/ կամ սկիզբը, ավարտը | 20. 04. 2015թ. - 31.05.2018թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Գեղարվեստական կրթություն ստանալ ցանկացող երեխաների մասնագիտական կրթության ապահովում ուսումնական պլանով նախատեսված առարկաների միջոցով: Մինչ առաջիկա սեպտեմբերից ուսումնական տարին լիարժեքորեն ու ողջ ծավալով սկսելը կազմակերպվելու է նախապատրաստական դասընթաց: Ծրագրի շրջանակներում ուսման տևողությունը լինելու է հինգ և ավելի տարիներ՝ կախված ընտրած մասնագիտությունից:<br>Դպրոցն իրքը լինելով ամերիկահայ ազգային բարերար Ջոն Օհաննես Օյունջյանի բարի կամքի արտահայտություն՝ կոչված է ապահովելու գեղարվեստական ավանդույթների շարունակականությունը և անընդհատայնությունը արվեստների մայրաքաղաք Գյումրիում: Ընդգրկելով շնորհալի աշակերտներ՝ արվեստի այս կրօջախը նրանց տալու է բազմաժանր գեղագիտական կրթություն: Վերջինս ներառելու է երաժշտություն, երգ, պար, ասմունք, նկարչություն, քանդակ, դեկորատիվ-կիրառական արվեստ և այլն: Ավելին՝ տասնամյակների չզոյությունից հետո Գյումրի է վերադառնում դասական պարը՝ բալետի տեսքով, որը կօգնի հանրապետության երկրորդ քաղաքում դասական պարի ավանդույթների վերարթնացմանը: Մեծ անելիքներ կան նաև ազգային նվագարանների պահպանման և զարգացման ուղղությամբ:<br>Ելնելով նրանից, որ Գյումրիում վերջին տարիներին հաջողությամբ իրականացվում է «Վերածնունդ» միջազգային փառատոնը՝ «Վարդուհի» արվեստի դպրոցի գործունեությունը միտված է միջազգային այդ շարժման մեջ ներգրավվելուն և իր ունեցած եզակի հնարավորությունները քաղաքի գեղարվեստական կարիքներին ծառայեցնելուն:<br>Արվեստի այս դպրոցում հիմնականում սովորելու են, այն էլ՝ անվճար հիմունքներով, Գյումրու Օյունջյան վարժարանի աշակերտները, ինչպես նաև օժտված սաներ քաղաքից ու Շիրակի մարզի այլ բնակավայրերից:<br>Ծախսերը ներառում են երեխաների կրթամշակութային դաստիարակության կազմակերպման, հիգիենայի, կրթական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև մասնագիտական, աղմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերն ու սահմանված հարկերը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը 2015 - 2018թթ համար կազմելու է 172 228 150 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:<br>Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների.<br>1. դպրոցին անհրաժեշտ տրանսպորտային միջոցի ձեռքբերում՝ 16 235 000 ՀՀ դրամ<br>2. կահույքի ձեռքբերում՝ 5 800 000 ՀՀ դրամ<br>3. համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 4 200 000 ՀՀ դրամ<br>4. կոմունալ և կապի ծախսեր՝ 28 606 650 ՀՀ դրամ<br>5. հիմնական միջոցների սպասարկում և վերանորոգում՝ 6 000 000 ՀՀ դրամ<br>6. վառելիքաքսուկային նյութերի ձեռքբերում՝ 8 100 000 ՀՀ դրամ<br>7. գրասենյակային պիտույքների ձեռքբերում՝ 2 500 000 ՀՀ դրամ<br>8. մասնագետների աշխատավարձեր՝ 77 450 000 ՀՀ դրամ<br>9. կազմակերպչական ծախսեր՝ 21 636 500 ՀՀ դրամ<br>10. սանիտարահիգիենիկ պիտույքներ՝ 1 700 000 ՀՀ դրամ<br>Բոլոր վերոնշյալ ծախսերը կատարվելու են «Օյունջյան» բարեգործական հիմնադրամի |

6/3

6/3

| | | |
|---|---|---|
| | | շահառու երեխաների համար: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք 2015թ. ապրիլի 20-ից մինչև 2018թ. մայիսի 31-ը ԱԱՀ-ից ազատում հետևյալ կազմակերպությունների/ծառայությունների գծով՝<br><br>1. "Toyota" մակնիշի մեկ ավտոմեքենայի ձեռքբերում (ներմուծվող արտերկրից)<br>16 235 000 ՀՀ դրամ<br><br>2. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Ղարս» մասնաճյուղ, ք. Գյումրի, Լ. Մադոյան 43, ՀՎՀՀ 01520882, պայմանագիր N 120682, կնքված՝ 12.08.2013թ., Պայմանագրի գինը 20.04.2015թ. - 31.05.2018թ. համար - 3 330 000 ՀՀ դրամ<br><br>3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ - 24 050 000 ՀՀ դրամ (Պայմանագրի պատճենը կներկայացվի կնքվելուց հետո)<br><br>4. «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ, ք.Գյումրի, Դուդկո 1, ՀՎՀՀ 05531223, պայմանագիր՝ կնքված 01.10.2014թ., Պայմանագրի գինը 20.04.2015թ.-31.05.2018թ. համար - 511 250 ՀՀ դրամ<br><br>5. «Ղ Տելեկոմ» ՓԲԸ - 357 700 ՀՀ դրամ (Պայմանագրի պատճենը կներկայացվի կնքվելուց հետո)<br><br>6. Ինտերնետ կապի ձեռքբերում - 357 700 ՀՀ դրամ (Պայմանագրի պատճենը կներկայացվի կնքվելուց հետո)<br><br>7. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում - 2 500 000 ՀՀ դրամ (Պայմանագրի պատճենը կներկայացվի յուրաքանչյուր տարի կնքվելուց հետո) |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 21 636 500 ՀՀ դրամ կամ ծրագրի ընդհանուր արժողության 12.5 %-ը: Կազմակերպական ծախսերը ներառում են տրանսպորտային և գործուղման, մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման (սեմինարների/դասընթացների մասնակցություն), տպագրական, գրասենյակի աշխատակիցների գրենական պիտույքների և համակարգիչների սպասարկման, աուդիտորական ծառայությունների ձեռքբերման ծախսերը: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ ԿԳ նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ Շիրակի մարզպետարան, Գյումրու քաղաքապետարան և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Ջոն Օհաննես Օյունջյանի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 512 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-881-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N 07/80-2/11816-15 և մայիսի 7-ի N 06/3-3/11315-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» N Մ-881-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի մայիսի 15-ի Մ-510-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տոսպ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2015 թվականի մայիսի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շապիկների ձեռքբերում՝ 345,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՆՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 513 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 21-ի N 07/80-2/9998-15 և ապրիլի 16-ի N 06/3-3/9363-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 11-րդ կետում «Տարեկան ֆինանսական աուդիտի անցկացում - «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ» բառերը փոխարինել «2014 և 2015 թվականների տարեկան ֆինանսական աուդիտի անցկացում - «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ» բառերով:

2. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529689) 2015 թվականի մարտի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2014 թվականի ֆինանսական հաշվետվությունների և Բաց հասարակության հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվական փաթեթի աուդիտի իրականացում՝ 25,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N 112756936 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մայիսի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 1,096,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2014 թվականի մարտի 5-ին կնքված՝ N 1610132 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մայիսի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում շարժական հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 783,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930093) 2013 թվականի հունիսի 27-ին կնքված՝ N IC-1607 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի մայիսի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ինտերնետ կապի ծառայությունների մատուցում՝ 1,566,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 514 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 5-ի N 07/80-2/10910-15 և ապրիլի 29-ի N 06/3-3/10487-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-110-Ա որոշմամբ (2015 թվականի մայիսի 15-ի N Մ-513-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հոթել Աղվերան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00073669) 2015 թվականի ապրիլի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 1,687,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 515 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N1)**
**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 07/80-2/11484-15 և մայիսի 4-ի N 06/3-3/10693-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 12-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2015-2016 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-110-Ա որոշմամբ (2015 թվականի մայիսի 15-ի N Մ-513-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Երևան Հյուրանոց» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02533075) 2015 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 2015 թվականի մայիսի 20-ին և 21-ին սեմինար կազմակերպելու նպատակով՝ 2,593,750 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 516 - Ա**

**քաղ. Երևան**

### «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11845-15 և մայիսի 14-ի N 06/18-4/12011-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N ԱՄ/22.2/5310-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Hopital Assistance International» բարեգործական կազմակերպության կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (բժշկական կահույք և ուլտրաձայնային հետազոտության սարք՝ իր երեք տվիչներով, 263 տեղ, 4,720 կգ ընդհանուր քաշով, 800 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 4,045 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 517 - Ա**

**քաղ. Երևան**

### «ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ՊԵՐԻՆԱՏԱԼՈԳԻԱՅԻ, ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 13-ի N 07/80-2/11846-15 և N 06/5-1/11970-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 12-ի N ԱՄ/22.2/5311-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Օրքասսանոյի «Սպիտակ խաչ» հանրային աջակցության կամավոր ասոցիացիայի կողմից «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի («Fiat Ducato» մակնիշի 1996 թվականի արտադրության շտապ օգնության ավտոմեքենա, նույնականացման համարանիշը՝ ZFA23000005346937, 2,500 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,066 եվրո, ԱՄ ՄԶՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ- 518 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12220-15 և մայիսի 14-ի N 06/18-4/12096-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 14-ի N ԱՄ/22.2/5395-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (պատվաստանյութ, 12 տեղ, 584 կգ ընդհանուր քաշով, 117,735 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,726,380 հարավկորեական վոն, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2015 թվականի N Մ- 519 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 15-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12298-15 և մայիսի 18-ի N 06/5-1/12303-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 14-ի N ԱՄ/22.2/5396-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (պատվաստանյութ, 12 տեղ, 583 կգ ընդհանուր քաշով, 118,440 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,716,660 հարավկորեական վոն, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 մայիսի 2015 թվականի N Մ- 520 - Ա
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 15-ի նիստին)
քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 18-ի N 07/80-2/12299-15 N 06/5-1/12302-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 14-ի N ԱՄ/22.2/5392-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (պատվաստանյութ, 7 տեղ, 826.2 կգ ընդհանուր քաշով, 132,540 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,282.80 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 մայիսի 2015 թվականի N Մ- 521 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 15-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 18-ի N 07/80-2/12300-15 և մայիսի 19-ի N 06/5-1/12529-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 14 -ի N ԱՄ/22.2/5394-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (պատվաստանյութ, 21 տեղ, 527.86 կգ ընդհանուր քաշով, 17,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,473,660 հարավկորեական վոն, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-522-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N Մ-401-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12224-15 և մայիսի 13-ի N 06/3-3/11978-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015 թվականի մայիսի 11-ի N 122/44 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին (N1)» N Մ-401-Ա որոշման 1-ին կետում «1269.28 եվրո» բառերը փոխարինել «735.27 եվրո» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**15 մայիսի 2015 թվականի N Մ-523-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի N Մ-402-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12225-15 և N 06/3-3/12239-15 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015 թվականի մայիսի 11-ի N 121/44 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 17-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված բեռի ներմուծման ծրագրի մասին (N2)» N Մ-402-Ա որոշման 1-ին կետում «2653.88 եվրո» բառերը փոխարինել «1952.57 եվրո» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ- 524 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N 07/80-2/10683-15 և ապրիլի 29-ի N 06/3-3/10451-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 02/14/5104-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի մայիսի 11-ի N 4/32.2/5913-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի ապրիլի 28-ի N 01/2064-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 2,707,241 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ողջիի գյուղի խմելու ջրի մատակարարման պոմպակայանի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2015 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 183/DWSV/14/07/03 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ողջիի համայնքում խմելու ջրի ջրամատակարարման համար պոմպակայանի կառուցման աշխատանքների իրականացում՝ 2,540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Գագիկ Տարասյանի կողմից
«20» ապրիլի, 2015թ.

## «Շիրակի մարզի Ողջի գյուղի խմելու ջրի մատակարարման պոմպակայանի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Խմելու ջրի մատակարարման պոմպակայանի կառուցում, պոմպի տեղադրում Շիրակի մարզի Ողջի համայնքում |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն |
| 3 | Բարեգործը | Կարիտաս Իտալիա բարեգործական կազմակերպություն<br>Via Aurelia 796, 00165 Roma, ITALIA |
| 4 | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարիտաս ԲՀԿ<br>Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն, ՀՎՀՀ 05514397 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզի Ողջի գյուղ,<br>բնագավառը՝ ջրամատակարարում |
| 6 | Ծրագրի բյուջեն | 2.707.241 դրամ, որից 167.241 դրամը համայնքային ներդրումն է: ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարը կազմում է 2.540.000 դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շիրակի մարզի Ողջի համայնքի բնակիչները |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 3 ամիս, մայիս 1- օգոստոս 1, 2015 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է պոմպակայանի կառուցում, պոմպի տեղադրում: Ծրագրի շինարարական աշխատանքերի պայմանագրային արժեքը կազմում է 2.707.241 դրամ, որից 167.241 դրամը համայնքային ներդրումն է: ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարը կազմում է 2.540.000 դրամ: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն շինանյութ, կօգտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք:<br>Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 2.707.241 դրամ, որից 167.241 դրամը համայնքային ներդրումն է: ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարը կազմում է 2.540.000 դրամ:<br>Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ-ի կողմից: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Ավտոմեքենայի վառելանյութ և շահագործում՝ 10000 ՀՀ դրամ<br>2. Փոստային և հանրային կապեր՝ 5 000 ՀՀ դրամ<br>Ընդամենը կազմակերպչական՝ 15 000 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի մասին պաշտոնական նամակով կտեղեկացվի Շիրակի մարզպետարանին: Անմիջական համագործակցություն կիրականացվի տեղական համայնքապետարանի, «Շիրակջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ի, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վարչական Խորհուրդը: Մարզպետարանը, համայնքապետարանն ու «Շիրակջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ն ազատ են ընտրել ու կիրառել վերահսկողության իրենց մեխանիզմները:<br>Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ- 525 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԱՀԱՊԵՏԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 4-ի N 07/80-2/10702-15 և ապրիլի 29-ի N 06/3-3/10447-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի ապրիլի 30-ի N 02/14/5103-15, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 2015 թվականի մայիսի 28-ի N 01/02.3/5818-15 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի ապրիլի 28-ի N 01/2062-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ՀՎՀՀ՝ 5514397) կողմից իրականացվող՝ 3,461,229 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավան գյուղի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2015 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 182/DWSN/15/07/02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նահապետավանի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 2,540,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:



3. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Գագիկ Տարասյանի կողմից
«20» ապրիլի, 2015.թ.

## «Շիրակի մարզի Նախապետավան գյուղի խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում. d 50-110 մմ խողովակի 950գ/մ հատվածի հատվածի փոխում նորով |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ստանալ Ավելացված Արժեքի Հարկից ազատման արտոնություն |
| 3 | Բարեգործը | Կարիտաս Իտալիա բարեգործական կազմակերպություն<br>Via Aurelia 796, 00165 Roma, ITALIA |
| 4 | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարիտաս ԲՀԿ<br>Գյումրի, Դ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն, ՀՎՀՀ՝ 05514397 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզի Նախապետավան գյուղ<br>բնագավառը՝ ջրամատակարարում |
| 6 | Ծրագրի բյուջեն | 3.461.299 դրամ, որից 921.299 (ինը հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր իննսունինը) դրամը համայնքային ներդրում է: ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարը կազմում է 2.540.000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամ: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շիրակի մարզի Նախապետավան գյուղի բնակիչները |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 3 ամիս, մայիս 1- օգոստոս 1, 2015 թ. |

| | | |
|---|---|---|
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 800 գ/մ d=50 մմ-ոց և 150 գծ/մ 110 մմ խողովակաշարերի մոնտաժում:<br>Ծրագրի շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 3.461.299 դրամ, որից 921.299 (ինը հարյուր քսանմեկ հազար երկու հարյուր իննսունինը) դրամը համայնքային ներդրում է: ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարը կազմում է 2.540.000 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամ: |
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք կբերվեն 800 գ/մ d=50 մմ-ոց և 150 գծ/մ 110 մմ-ոց սինթետիկ խողովակներ, ձևավոր մասեր, կօգտագործվի շինտեխնիկա, մասնագիտական ու բանվորական աշխատանք:<br>Ձեռք բերվող ապրանքների, ինչպես նաև ծառայությունների գինը կազմում է 3.461.299 դրամ, որից 921.299 դրամը համայնքային ներդրումն է: ԱԱՀ-ից ազատման ենթակա գումարը կազմում է 2.540.000 դրամ: Ծառայությունները կմատուցվեն կապալառու «Արխտեխ-շին» ՍՊԸ-ի կողմից: |
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*ՈՒՋԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎՈՂ*

*Բեռի ցանկ*

**GLOBAL AID NETWORK** բարեգործական կազմակերպությունից 15.04.2015թ-ին Ուջանի միջնակարգ դպրոցի անվամբ ստացվելու է 58 հատ փոքր սեղաններ (օգտագործված), 175 հատ աթոռներ (օգտագործված),193 արկղ հագուստ (օգտագործված), 70 զույգ հենակներ(օգտագործված), 25 հատ գրասեղանի աթոռներ(օգտագործված), 21 հատ սեղաններ (օգտագործված), 2 հատ հեծանիվներ (օգտագործված),1 հատ շարժական հաշմանդամի էլեկտրական սայլակ(օգտագործված), 30 արկղ վերմակներ (օգտագործված), 1 հատ մահճակալ (օգտագործված), 5 հատ պահարան (օգտագործված), 6 հատ նստարաններ (օգտագործված),4 հատ անվադողեր (օգտագործված), 1հատ մանկական արկղ (օգտագործված), 2հատ խոհանոցային վառարաններ(օգտագործված),16 հատ անիվավոր քայլակներ(օգտագործված), 43 հատ մատրասներ(օգտագործված), 28 արկղ խոհանոցային պարագաներ(օգտագործված),1 հատ սառնարան(օգտագործված), 8 հատ արդուկի սեղան(օգտագործված),1 ցանց ֆուտբոլային գնդակներ(օգտագործված) : Ընդհանուրը 6969 կգ., 3585.0 եվրո արժողությամբ /3530.0 եվրո ճանապարհածախսով/ :

Բեռի բաշխման ցանկը կներկայացվի բեռը ստանալուց հետո:

Ուջանի մ/դ տնօրեն /Ա.Հարությունյան /

հեռ./tel +374 093-21-63-93

*ՈՒՋԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎՈՂ*

*Բեռի բաշխման ցանկ*

GLOBAL AID NETWORK բարեգործական կազմակերպությունից 15.04.2015թ-ին Ուջանի միջնակարգ դպրոցի անվամբ ստացվող գույքի .

1) 58 հատ փոքր սեղաններ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
2) 175 հատ աթոռներ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
3) 193 արկղ հագուստ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
4) 70 զույգ հենակներ(օգտագործված)- մարզպետարանի սոց. բաժնին
5) 25 հատ գրասեղանի աթոռներ(օգտագործված)-5 հատ մարզպետար-ին,20-հատ Ուջանի միջն. դպրոցին
6) 21 հատ սեղաններ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
7) 2 հատ հեծանիվներ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
8) 1 հատ շարժական հաշմանդամի էլեկտրական սայլակ(օգտագործված) - մարզպետարանի սոց. բաժնին
9) 30 արկղ վերմակներ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
10) 1 հատ մահճակալ (օգտագործված)- Աշտարակի հիվանդանոցին
11) 5 հատ պահարան (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
12) 6 հատ նստարան-բազմոցներ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
13) 4 հատ անվադողեր (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
14) 1հատ մանկական արկղ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
15) 2 հատ խոհանոցային վառարաններ(օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
16) 16 հատ անիվավոր քայլակներ(օգտագործված)- մարզպետարանի սոց. բաժնին
17) 43 հատ մատրասներ(օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
18) 28 արկղ խոհանոցային պարագաներ(օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
19) 1 հատ սառնարան(օգտագործված) - Ուջանի միջն. դպրոցին
20) 8 հատ արդուկի սեղան(օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
21)4 պայուսակ վերմակներ (օգտագործված)- Ուջանի միջն. դպրոցին
22) 1 հատ խոհանոցային սարքավորումներներ (օգտագործված) - Ուջանի միջն. դպրոցին
23) 1 ցանց ֆուտբոլային գնդակներ(օգտագործված) - Ուջանի միջն. դպրոցին

**Ընդհանուրը 6969 կգ., 3585.0 եվրո արժողությամբ /3530.0 եվրո ճանապարհածախսով/ :**

Ուջանի մ/դ տնօրեն /Ա.Հարությունյան /

հեռ./tel +374 093-21-63-93

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**19 մայիսի 2015 թվականի N Մ- 539 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի մայիսի 15-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի Զուպարկ Դը Բյուվալ կենդանաբանական այգու կողմից «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հասցեով ուղարկված մեկ արու բորենին (330 կգ ընդհանուր քաշով, 100 եվրո արժողությամբ, կենդանու տեղափոխման արկղի արժեքը կազմում է 45 ԱՄՆ-ի դոլար, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 5,050 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 մայիսի 2015 թվականի N Մ- 540 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-803-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ) N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի մայիսի 15-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆինանսավորմամբ ձեռքբերված պոլիգրաֆիկ նյութերը (35 տեղ, 280 կգ ընդհանուր քաշով, 190,000 ՌԴ ռուբլի արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի կենդանաբանական այգու բարեկարգում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-803-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 14-ի N Մ-927-Ա և 2014 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-1302-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 մայիսի 2015 թվականի N Մ- 541 – Ա**

(Որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 15-ին)

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1028-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12149-15 և մայիսի 19-ի N 06/5-1/12524-15 եզրակացությունները և հաշվի առնելով «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի 2015 թվականի մայիսի 11-ի N 04-310,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի վերազինում» ծրագրի մասին» N Մ-1028-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի ապրիլի 3-ի Մ-296-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի մայիսի 31-ը:

2. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռք բերված արևի ճառագայթման ստիմուլյատորը (150 կգ ընդհանուր քաշով, 31,057 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2015 թվականի մայիսի 19-ի
N 15/15.9/8536-15 ելիցի

11 հունիսի 2015թ.

No 15/15.9/10821-15

ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 19-ի N Մ-541-Ա որոշման 2-րդ կետում «31,057 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ» բառերի փոխարեն կարդալ «31,057.5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ» բառերը:

Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

Ի լրումն մեր 2015 թվականի մայիսի 19-ի
N 15/15.9/8536-15 ելիցի

10 հունիսի 2015թ.

No 15/15.9/9955-15

ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 19-ի N Մ-541-Ա որոշման 2-րդ կետում «150 կգ ընդհանուր քաշով» բառերի փոխարեն կարդալ «103 կգ ընդհանուր քաշով» բառերը:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 մայիսի 2015 թվականի N Մ- 542 – Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 15-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարան)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 15-ի N 07/80-2/12148-15 և մայիսի 19-ի N 06/5-1/12525-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից ձեռք բերված ներքոհիշյալ ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող 2014-2015 թվականների զարգացման» ծրագրի մասին (1-ին փուլ)» N Մ-1293-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի ապրիլի 3-ի N Մ-295-Ա և ապրիլի 17-ի N Մ-374-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում՝

1) վակում չորացնող համակարգ՝ 93 կգ ընդհանուր քաշով, 5,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

2) ռոտորային չորացուցիչ համակարգ՝ 31 կգ ընդհանուր քաշով, 3,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

3) ավտոմատացված էքստրակտոր չհագեցած ճարպերի համար՝ 42 կգ ընդհանուր քաշով, 6,100 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.



4) ուլտրաձայնային հոմոգենիզատոր՝ 27 կգ ընդհանուր քաշով, 2,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

5) ինկուբատոր CO2՝ 150կգ ընդհանուր քաշով, 7,780 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

6) ջրի մաքրման համակարգ՝ 37 կգ ընդհանուր քաշով, 4,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

7) լաբորատոր սառցարան՝ 74 կգ ընդհանուր քաշով, 2,240 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

8) ֆլուրիսցենտային անալիզատոր՝ 23 կգ ընդհանուր քաշով, 7,850 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

9) սպեկտրոմետր՝ 17 կգ ընդհանուր քաշով, 6,300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

10) կենսաանվտանգ աշխատանքային խցիկ՝ 336 կգ ընդհանուր քաշով, 7,600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ.

11) բիոլոգիական միջավայրերի աճեցման պահարան՝ 223 կգ ընդհանուր քաշով, 3,050 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ - 543 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 18-ի N07/80-2/9721-15 և N 06/3-3/9697-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա, 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հա-Արտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02515522) 2015 թվականի մարտի 14-ին կնքված՝ N 017/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աշխատանքային նախագծի փոփոխության փաթեթի պատրաստում ՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ - 544 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N1)**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի ապրիլի 18-ի N07/80-2/9670-15 և 16-ի N 06/3-3/9365-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա, 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հա-Արտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02515522) 2015 թվականի մարտի 30-ին կնքված՝ N 021/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողության աշխատանքների կատարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**15 մայիսի 2015 թվականի N Մ - 545 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մարտի 3-ի N 07/80-2/4742-15 և 2-ի N 06/3-3/4551-15 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա, 2011 թվականի մայիսի 13-ի N Մ-346-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վազեն Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00105041) 2015 թվականի փետրվարի 17-ին կնքված՝ N007/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Դիլիջան քաղաքի Գետափնյա 102ա հասցեում գործող բարեսիրական կենտրոն՝ մանկական ուսուցման կենտրոնի, գազիֆիկացման աշխատանքների իրականացում՝ 3,154,199 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**20 մայիսի 2015 թվականի N Մ- 546 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի մայիսի 15-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 19-ի N 07/80-2/12610-15 և N 06/18-4/12527-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի մայիսի 18-ի N ԱՄ/22.2/5543-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ և բժշկական պարագաներ, 2 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**20 մայիսի 2015 թվականի N Մ-547-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մայիսի 19-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված կահույքը (23 տեղ, 998 կգ ընդհանուր քաշով, 8,793.28 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 575,000 դրամ, «ՄԾՓ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽ[illegible]                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**21 մայիսի 2015 թվականի N Մ-548-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մայիսի 14-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք iMac հմակարգիչները (64 հատ՝ 7 տեղ, 742 կգ ընդհանուր քաշով, 81,216 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,430 եվրո, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-1041-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի մարտի 13-ի N Մ-222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**21 մայիսի 2015 թվականի N Մ-549-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԱՔ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՐԱԽՏԻՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի մայիսի 8-ի N 07/80-2/11526-15 և մայիսի 6-ի N 06/3-3/11100-15 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի մայիսի 7-ի N 02/14/5361-15 եզրակացությունները, ինչպես նաև հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մայիսի 14-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող՝ 3,038,000 դրամ ընդհանուր արժեքով «Արաք ժողովրդին երախտիքի հուշարձանի լուսավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նյուտեք շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02613143) 2015 թվականի ապրիլի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինմոնտաժային աշխատանքների իրականացում՝ 135,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված լուսավորման սարքավորումները (մեկ տեղ, 159 կգ ընդհանուր քաշով, 4,178.40 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 950 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:



4. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
պաշտոնակատար Օհանես Եղրեկյանի կողմից

«22» ապրիլի 2015թ.

«Արաբ ժողովրդին երախտիքի հուշարձանի լուսավորում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքային համայնքին պատկանող Արաբ ժողովրդ երախտիքի հուշարձանի արտաքին լուսավորման ապահովում: |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծ արտոնություններից: |
| 3. | Բարեգործ | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (հասցե՝ 55 East, 59th Street, New Yor NY 10022, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հ. քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ադմիրալ Իսակովի պողոտա՝ քաղաքաշինությա բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում 3,038,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի քաղաքային համայնք: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի ապրիլի 22-ից մինչև 2015 թվականի մայիսի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում է 2015 թվականի ապրիլ-հունիս ամիսներին ներմուծել 5,128.40 եվրոյին համարժե դրամ արժողությամբ լուսավորման սարքեր, ինչպես նաև 415,000 դրամով ձեռք բերել մետաղակա էլեկտրական հենասյուներ, տեղադրել լուսատուները և հենասյուները հուշարձանի շուրջը: |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Լիբանանից ներմուծել 5,128.40 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ արտաք լուսավորության սարքավորումներ և դրանց ամրակայման մասերը: Գումարը ներառում փոխադրավարձը՝ 950 եվրո:<br>«Անվի» ՍՊԸ-ի հետ կնքել 280,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի ընդհանուր արժեքով պայմանագիր՝ 3 բարձրությամբ էլեկտրականության չորս մետաղական հենասյների պատրաստման և տեղադրմ համար:<br>«Նյուտեք շին» ՍՊԸ-ի հետ կնքել 135,000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի ընդհանուր արժեքով պայմանագ մալուխների փոսորակները սյուների հոսանքներին միացնելու, մալուխները տեղադրելուց հետո բազալ սալիկներ տեղադրելու և մակերեսը հարթեցնելու համար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի կազմակերպման հետ առնչվող ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, և այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ‹ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքո սահմանված կարգով: |

Կազմեց Լենա Բաղդասարյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
տեղական ֆինանսական գծով
60-61-22-50, 60-61-22-51

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**22 մայիսի 2015 թվականի N Մ- 550 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1028-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մայիսի 21-ի համաձայնեցման թերթը, ո ր ո շ ո ւ մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող ««Էլեկտրոնիկա և նանո-էլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի վերազինում» ծրագրի մասին» N Մ-1028-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի ապրիլի 3-ի Մ-296-Ա և մայիսի 15ի N Մ-541-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխու-թյունները՝

1) որոշման 1-ին կետի «102,681,000 դրամ» բառերը փոխարինել «112,480,070 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը կարդալ նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից (ՀՎՀՀ 00053474) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1. «Իմունոֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00650292) 2015 թվականի մայիսի 8-ին կնքված պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է ջերմային վառարանի մատակարարում [illegible] դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. Ս[illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը[illegible]

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Հաստատված է**
**Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի**
**Ռեկտոր՝ Ա.Ռ. Դարբինյանի կողմից**
**« 20 » մայիսի 2015թ.**

***«Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի վերազինում***

| | | |
|---|---|---|
| 1. | Ծ ր ա գ ր ի  ն պ ա տ ա կ ը | Սույն դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակն է «Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով վերզինել ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազան, իրականացնել առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների արդիականացում և դասավանդման մեթոդոլոգիայի վերանայում, մեծացնել ուսանողների ներգրավածությունը լաբորատոր և գիտահետազոտական աշխատանքներում, ուսանողներին տալ ժամանակակից, գիտատեխնիկական առաջընթացին համապատասխանող տեսական, փորձարարական և կիրառական գիտելիքներ:<br>Դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է.<br>• ձեռք բերել ժամանակակից տեխնոլոգիական և չափիչ սարքավորումներ և վերակազմավորել ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաները,<br>• արդիականացնել մասնագիտական առարկայական ծրագրերը |

| | | |
|---|---|---|
| | | «էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» ուղղությամբ, դրանցում ընդգրկել նոր լաբորատոր աշխատանքներ՝ համապատասխանեցնելով նոր, վերազինված լաբորատոր հնարավորություններին և գիտահետազոտական առաջընթացին:<br>Որպես արդյունք ակնկալվում է ունենալ վերազինված լաբորատոր բազա, որը հնարավորություն կտա ընդլայնել և արդիականացնել ամբիոնի և ամբիոնին կից գործող Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի (ՀՌՀ) կրիտիկական տեխնոլոգիաների կենտրոնի «Էներգիայի նոր և վերականգնվող աղբյուրների տեխնոլոգիա» խմբի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների գիտական թեմաները նանոէլեկտրոնիկայի և նանոտեխնոլոգիայի բնագավառում, ինչպես նաև ակնկալվում է ունենալ մշակված նոր լաբորատոր աշխատանքներ, բարձր տեխնոլոգիաների ոլորտում փորձարարական և կիրառական թեմաներ՝ ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ասպիրանտական ատենախոսությունների կատարման համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական ոակման նպատակը | Ակնկալում ենք օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ (ՆՄՀ)<br>Հասցե: Ս. Վրացյան 73, Երևան 0070,<br>Հեռ՝ +374 (10) 57 56 90, Հեռ/ֆաքս՝ +374 (10) 55 97 50 |
| 4. | Ծրագրի կատարողը | ԲՄԿ ՊՈԻՀ «Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»<br>ՀՀ, ք. Երևան, 0051, Հովսեփ Էմին 123, Ակբիզբանկ ՓԲԸ, ՀՎՀՀ 00053474 |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, ք. Երևան 0051, Հ. Էմինի 123:<br>բնագավառը՝ [illegible]թական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է *112 480 070 ՀՀ* դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ԲՄԿ ՊՈԻՀ «Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»-ը, ի դեմս ուսանողների, գիտաշխատողների և դասախոսների: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 01 հոկտեմբեր 2014թ.<br>Ծրագրի ավարտը՝ 31 մայիսի 2015թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների | 2014թ-ի հոկտեմբերից մինչև 2015թ.-ի մայիսն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>1. ***Ավտոմատ փոշեցրման մագնետրոնային սարքավորման գնում (ներմուծում)***: Սույն թվականի օգոստոսի 15-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի և Nano-Master Inc.-ի միջև կնքվել է ավտոմատ փոշեցրման մագնետրոնային սարքավորման ձեռք բերման պայմանագիր: Պայմանագրի արժեքը 164 000 ԱՄՆ դոլար է, տևողությունը՝ 115 օր: Դրամաշնորհային ծրագրի բյուջեով սարքավորման ձեռք բերման համար նախատեսված է 82 341 000 ՀՀ դրամ: Գնումընախատեսվում է 2015թ-ի փետրվարին)<br>2. ***Արևի ճառագայթման սիմուլյատորի գնում (ներմուծում)***: Սիմուլյատորի գնման նպատակով իրականցվել է միջազգային գնանշում, հայտնի է հաղթող կազմակերպության անունը: ԾԻԳ-ի կողմից գնանշման արդյունքների հաստատումից հետո կսկսվեն բանակցային գործընթացները: Դրամաշնորհային ծրագրի բյուջեով արևի ճառագայթման սիմուլյատորի |

| | | |
|---|---|---|
| | | ձեռք բերման համար նախատեսված է 15 839 070 ՀՀ դրամ: (Գնումը նախատեսվում է 2015թ-ի մայիսին)<br>3. ***Ջերմային վառարանի գնում*** (*ներմուծում*): Ջերմային վառարանի գնման նպատակով իրականցվել է միջազգային գնանշում, հայտնի է հաղթող կազմակերպության անունը: Պայմանագրի պայմանների հստակեցման նպատակով շարունակվում են բանակցային գործընթացները: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով ջերմային վառարանի ձեռք բերման համար նախատեսված է 7 260 000 ՀՀ դրամ: (Գնումը նախատեսվում է 2015թ-ի մայիսին)<br>4. ***Մագնետրոնի փոշեցրման համար անհրաժեշտ թիրախների գնում*** (*ներմուծում*): Թիրախների գնման նպատակով իրականցվել է միջազգային գնանշում, հայտնի է հաղթող կազմակերպության անունը: ԾԻԳ-ի կողմից գնանշման արդյունքների հաստատումից հետո կսկսվեն բանակցային գործընթացները: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով թիրախների ձեռք բերման համար նախատեսված է 2 700 000 ՀՀ դրամ: (Գնումը նախատեսվում է 2015թ-ի փետրվարին)<br>5. ***Մագնետրոնի աշխատանքի համար անհրաժեշտ գազերի գնում*** (*ձեռքբերում*): Գազերի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն, և պատրաստվում են գնանշման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով գազերի ձեռք բերման համար նախատեսված է 1 400 000 ՀՀ դրամ: (Գնումը նախատեսվում է 2014թ-ի նոյեմբերին):<br>6. ***Լաբորատոր ձեռնարկների և բուկլետների տպագրություն:*** Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է տպագրել 4 առարկաների համար արդեն մշակված լաբորատոր ձեռնակրները և բուկլետներ: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով տպագրության համար |



| | | |
|---|---|---|
| | | նախատեսված է 870 000 ՀՀ դրամ: (Տպագրությունը նախատեսվում է 2014թ-ի դեկտեմբերին):<br>7. ***Խորհրդատվական ծախսեր*** ՝ գիտական/ուսումնամեթոդաբանական սեմինարների կազմակերպում, ֆինանսական և հաշվապահական խորհրդատվություններ և այլն: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նշված ժամանակահատվածում խորհրդատվական ծախսերի համար նախատեսված է 1 890 000 ՀՀ դրամ: Նախատեսվում է իրականացնել մինչև 2014թ-ի դեկտեմբերը:<br>8. Կլոր սեղանի կազմակերպում: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նախատեսված է 120 000 ՀՀ դրամ: Նախատեսվում է կազմակերպել դրամաշնորհային ծրագրի ավարտին:<br>9. ***Չկանխատեսված ծախսեր*** ՝ նախատեսված է 60 000 ՀՀ դրամ:<br><br>***Նախատեսված ընդհանուր ծախսերը 112 480 070 ՀՀ դրամ:*** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ավտոմատ փոշեցրման մագնետրոնային սարքավորման համառոտ նկարագիրը:<br>Ավտոմատ ծրագրային կառավարմամբ մագնետրոնային փոշեցրման սարքավորումը նախատեսված է կիսահաղորդչային, դիէլեկտրիկ և մետաղական թաղանթների ստացման համար:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով սարքավորման գնման (ներմուծման) համար նախատեսված է 82 341 000 ՀՀ դրամ:<br>2. Արևի ճառագայթման սիմուլյատորի համառոտ նկարագիրը:<br>Արևի ճառագայթման սիմուլյատորը նախատեսված է արևային էլեմենտների ՕԳԳ-ի, վոլտ-ամպերային բնութագրերի և պարամետրերի չափման համար:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով արևի ճառագայթման ստիմուլյատորի |

| | | |
|---|---|---|
| | | գնման (ներմուծման) համար նախատեսված է 15 839 070 ՀՀ դրամ:<br>**3. Ջերմային վառարանի համառոտ նկարագիրը:**<br>Բարձր ջերմաստիճանային վառարանը նախատեսված է էլեկտրոնիկայում և միկրոէլեկտրոնիկայում կիրառվող տարբեր տիպի կերամիկական և նանոկոմպոզիտային նյութերի սինթեզի և ջերմամշակման համար:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով ջերմային վառարանի գնման (ներմուծման) համար նախատեսված է 7 260 000 ՀՀ դրամ:<br>**4. Մագնետրոնի փոշեցրման համար անհրաժեշտ թիրախների բնութագիրը:**<br>Մագնետրոնի փոշեցրման եղանակով տարբեր նյութերի թաղանթներ ստանալու համար անհրաժեշտ թիրախներ:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով թիրախների գնման (ներմուծման) համար նախատեսված է 2 700 000 ՀՀ դրամ:<br>**5. Մագնետրոնի աշխատանքի համար անհրաժեշտ գազերի նկարագիրը:**<br>Մագնետրոնի աշխատանքի համար անհրաժեշտ են գազերը՝ արգոն և ազոտ:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով գազերի գնման (ձեռք բերման) համար նախատեսված է 1 400 000 ՀՀ դրամ:<br>*6.* **Լաբորատոր ձեռնարկների և բուկլետների տպագրություն:** Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է տպագրել 4 առարկաների համար արդեն մշակված լաբորատոր ձեռնակրները և բուկլետներ: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով տպագրության համար նախատեսված է 870 000 ՀՀ դրամ:<br>**7. Խորհրդատվական ծախսեր՝** գիտական/ուսումնամեթոդաբանական սեմինարների կազմակերպում, ֆինանսական և հաշվապահական խորհրդատվություններ և այլն: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նշված ժամանակահատվածում խորհրդատվական ծախսերի համար նախատեսված է 1 890 000 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| | | 8. Կլոր սեղանի կազմակերպում: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նախատեսված է 120 000 ՀՀ դրամ:<br>9. Չկանխատեսված ծախսեր՝ նախատեսված է 60 000 ՀՀ դրամ:<br><br>***Ընդհանուր ծախսերը՝ 112 480 070 ՀՀ դրամ:*** |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ (ՆՄՀ), «Կրթական ծրագրերի կենտրոն», Ծրագրերի իրականացման գրասենյակ Պետական հիմնարկ, ՀՎՀՀ 02550991<br>«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից վերահսկվում է դրամաշնորհային ծրագրի կատարումը: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիր իրականացման ընթացքում նախատեսված է Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ին ներրկայացնել ընթացիկ (յուրաքանչյուր փուլի ավարտին) և վերջնական ծրագրային ու ֆինանսական հաշվետվություններ, ինչպես նաև ամփոփված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25 մայիսի 2015 թվականի N Մ - 551 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մայիսի 21-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Ճարտարապետության և շինարարական կրթության աջակցության» հիմնադրամի կողմից «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ինժեներական գեոդեզիայի լաբորատորիայի համալրման համար ձեռք բերված 3D լազերային սկաների՝ Trimble TX8 Istrument Pack (68 կգ ընդհանուր քաշով, 36,950 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 մայիսի 2015 թվականի N Մ - 552 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մայիսի 25-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Խորեն Մարդոյանի կողմից Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության հասցեով ուղարկված մակետային ինքնաթիռների (երեք տուփ, 16,5 կգ ընդհանուր քաշով, 989.93 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 290 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսվում է անհատույց հանձնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի վարչությանը:

2. Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 մայիսի 2015 թվականի N Մ-553-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N Մ-133-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի մայիսի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված սրբիչները և անկողնային պարագաները (մեկ տեղ, 1,500 կգ ընդհանուր քաշով, 19,949 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 600 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-133-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ